ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի գիտությունների ակադեմիայի բարեփոխումների հիմնական սկզբունքների մասին

Հայաստանի գիտությունների ակադեմիայի 50-ամյա գոյությունը մեծապես նպաստել է գիտության և հատկապես հիմնական գիտությունների զարգացմանը: ՀԽՍ-ի հանրապետությունում ձևավորվել են բազմաթիվ գիտական խոշոր նվաճումներ, ի հայտ են եկել միջազգային ճանաչում ստացած գիտական զարգացներ, որի շնորհիվ ՀԽՍ-ն իրավամբ դիտվել և դիտվում է որպես հայ ժողովրդի գիտական մտքի կարևորագույն կենտրոններից մեկը:

Սակայն ստեղծված լինելով 1943 թվականի խորհրդային հասարակական կարգերին բնորոշ գիտության կազմակերպման եղանակով՝ ՀԽՍ-ն անխուսափելիորեն կրել է իր մեջ այդ հասարակարգի թերությունները: Հակառակ համաշխարհային պրակտիկային և գիտության ազատ զարգացման տարաբաստությանը, ՀԽՍ-ի միասնական վարչական համակարգում միավորվել են իրար հետ ըստ էության կապ չունեցող երկու կառուցվածքներ՝ ակադեմիայի անդամների հանրությունը և գիտաուսումնական հիմնարկները: Այդ առհասնական միասնությունը պայմանավորած էր գիտության վարչարարական միասնական համակարգի ստեղծմամբ: Ակադեմիայի այս անբնական էկլեկտիկ կառուցվածքը ծնել է անբնական և հակասական մի համակարգ, որի կառավարման մարմինները՝ ընդհանուր ժողովը, հանձնաժողովները և բաժանմունքները կազմվում են բացառապես ակադեմիայի անդամներից, որոնք ընտրված լինելով զուտ գիտական ավանդի չափանիշներով, ի սկզբանե լիազորված չեն ներկայացնել ակադեմիական հիմնարկները և կարող են ընդհանրապես չաշխատել ակադեմիական համակարգում: Դրա հետևանքով ակադեմիայի հիմնարկները համակարգում փաստորեն խախտված էր գիտության ինքնակառավարման հիմնական սկզբունքը:

Այսպիսով ՀԽՍ-ն անխուսափելիորեն վերանել է հանրապետության գիտության նախարարությունը, որի գործունեությանը բացասական կողմերից էր գիտական ասպիրանտների, կոչումների և վարչարարական պաշտոնների անցանկալի սերտաճումը: Սակայն ՀԽՍ-ի կազմակերպման ամենամեծ թերությունը գիտահետազոտական գործընթացի հակաբնական անջատումն է կրթական գործընթացից: ՀԽՍ-ի եղած կառուցվածքի առկայությունը ըստ էության անհնարելի է այն փաստը, որ հիմնական գիտության հիմնական սպառողը բարձրագույն կրթությունն է:

Հայաստանի պետականության վերստեղծման ընթացքում կարևորագույն խնդիր է դառնում ՀԽՍ-ի վերափոխումը ժամանակի հրամայականին համապատասխան: Այդ վերափոխումը նպատակահարմար է իրականացնել հետևյալ հիմնադրույթներից.

1. Հայաստանի գիտությունների ակադեմիան վերակազմավորվում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի:

2. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան պետության կողմից հովանավորվող ինքնակառավարվող հասարակություն է, որը միավորում է Հայաստանի և իրենց գիտական գործունեությամբ Հայաստանի հետ կապված արտասահմանյան ականավոր գիտնականներին: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան գործում է համապատասխան իր օրենսդրության, որը ընդունում և փոփոխում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովը և հաստատում Հայաստանի Հանրապետության նախագահը: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի օրենսդրությունը այն հիմնագիր իրավական ակտն է, որը սահմանում է Ակադեմիայի կարգավիճակը, փոխհարաբերությունները կառավարության հետ, նպատակները, իրավասությունները և կառուցվածքը:

3. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան կազմված է ակադեմիայի անդամներից և ակադեմիայի արտասահմանյան անդամներից, որոնց ընտրության կարգը սահմանվում է ակադեմիայի օրենադրությամբ: Ակադեմիայի անդամների թիվը անփոփոխ է, իսկ արտասահմանյան անդամների թիվը չի սահմանափակվում: ՀԽՍ-ի իսկական անդամներին և թղթակից անդամներին համարել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամներ՝ վերացնելով ՀԽՍ-ի անդամության երկաստիճան համակարգը:

Ակադեմիան ղեկավարում է պրեզիդենտը, որն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից հինգ տարով, բայց ոչ ավելի, քան երկու ժամկետով: Ակադեմիան ունի փոխպրեզիդենտներ, որոնք ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից հինգ տարով, ոչ ավելի քան մեկ ժամկետով: Ակադեմիայի ընթացիկ գործունեությունը ղեկավարելու համար պրեզիդենտի առաջարկությամբ ակադեմիայի ընդհանուր ժողովը ընտրում է ակադեմիկոս քարտուղարին ակադեմիայի անդամներից: Պրեզիդենտը, փոխպրեզիդենտները և Ակադեմիայի ակադեմիկոս քարտուղարը կարող են զբաղեցնել այդ պաշտոնները մինչև իրենց 70 տարին լրանալը:

4. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարման կոլեգիալությունը ապահովելու համար հինգ տարի ժամկետով ընդհանուր ժողովում ընտրվում է ակադեմիայի նախագահությունը, որի թվակազմը և իրավասությունը սահմանվում է ակադեմիայի օրենսդրությամբ: Ակադեմիայի անդամը իրավունք չունի անընդմեջ ընտրվել նախագահության անդամ մեկ ժամկետից ավելի:

5. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիային վերապահել հետևյալ գործառույթները.

ա) կառավարչական պաշտոնական խորհրդատու.

բ) բնագիտական և հումանիտար հիմնարար հետազոտությունների պետական ծրագրերի առաջադրման իրավասություն.

գ) մասնակցություն հանրապետության զարգացման կանխատեսումների և երկարաժամկետ ծրագրերի մշակմանը:

դ) համազգային և միջազգային գիտաժողովների և գիտական ընկերակցությունների կազմակերպում.

ե) փորձագիտության սկզբունքների և փորձաքննության մեթոդների մշակում.

զ) հրատարակչական և գիտատեղեկատվական գործունեության իրականացում.

է) իր կողմից սահմանված մրցանակաբաշխությունների կազմակերպում.

ը) գիտական նվաճումների համար պարգևների շնորհում:

6. Ակադեմիայի նոր գործառույթների իրականացման նպատակով անհրաժեշտ համարել գիտությունների ակադեմիայի այժմ գործող բաժանմունքները փոխարինել ստեղծագործական պրոբլեմային խորհուրդներով (հանձնախմբերով), որոնց ստեղծման և գործունեության կանոնները սահմանվում են ակադեմիայի օրենսդրությամբ:

7. Պահպանել նախկին ՀԽՍ-ի հիմնարար հետազոտությունները իրականացնող գիտահետազոտական ինստիտուտների վարչակազմակերպչական միասնությունը, խմբավորելով դրանք Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ասրենքի հիմնարար գիտական հետազոտությունների ինստիտուտների միավորման կազմում, որին կարող են միանալ Հանրապետության տարածքում գործող հիմնարար գիտության այլ հաստատությունները: ՀԽՍ-ի համալսարանում ընդգրկված կիրառական հետազոտություններ և մշակումներ իրականացնող ինստիտուտների կարգավիճակը հշտել հանրապետության նախնատիպ այլ գիտական հետազոտական ինստիտուտների կացությունը սահմանելիս: Հիմնարար գիտական հետազոտությունների միավորման մեջ ընդգրկված ինստիտուտները խմբավորել երկու՝ բնական և հումանիտար գիտությունների ազգային կենտրոնների մեջ: Կենտրոնը գործում է համաձայն իր կանոնադրության, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան պահպանում է հիմնարար հետազոտությունների ազգային կենտրոններում միավորված ինստիտուտների հետևանքավարիա գիտատեխնիկական զեկավարության, ծրագրերի և արդյունքների փորձաքննության կազմակերպման ֆունկցիաները կենտրոնների կանոնադրությամբ սահմանված կարգով: Միավորման կենտրոնների տնօրենների թեկնածությունները առաջարկում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովը և հաստատում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը նրանց հետ կնքում է աշխատանքային կոնտրակտ:

8. Կենտրոնի կազմի մեջ մտնող պետական գիտական ինստիտուտը ստեղծվում է պետբյուջեային միջոցների հաշվին համալիր հետազոտական ծրագրերի իրականացման նպատակով: Ինստիտուտի ինքնուրույնության շրջանակները, կառավարման կառուցվածքը, ձևավորման և լուծարման կարգը որոշվում է նրա կանոնադրությամբ, որն ընդունվում և հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Պահպանվում է պետական գիտական ինստիտուտի երկարաժամկետ մասնակի պետբյուջեային ֆինանսավորումը գիտական պետական ծրագրերի սահմանումներում:

Ինստիտուտների տնօրենները նշանակվում են մրցութային հիմունքներով, որը հայտարարում է կենտրոնի տնօրենը: Մրցույթի փակ գաղտնի քվեարկությամբ իրականացնում է հանձնաժողովը, որը կազմվում է հետևյալ կարգով. հանձնաժողովի անդամների կեսը՝ տվյալ ինստիտուտի գիտաշխատողներից ընտրում է ինստիտուտի գիտխորհուրդը, իսկ մյուս կեսը ընտրում է կենտրոնը ինստիտուտում աշխատող ակադեմիայի անդամներից և ճանաչված այլ գիտնականներից: Մրցույթը շահած թեկնածուն հետ կենտրոնի տնօրենը կնքում է կոնտրակտ 3—5 տարվա ժամկետով:

9. Անհրաժեշտ համարել հիմնարար գիտական հետազոտությունների ազգային կենտրոնների ինստիտուտների և հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ֆակուլտետների կամ ամբիոնների համատեղ գիտաուսումնական ընկերակցությունների ստեղծում, վերապահելով այդ ընկերակցությունների աշխատանքի ինքնավար կազմակերպման իրավասություն: Ստեղծվելիք ընկերակցությունների կարգավիճակը, գործառույթները, կազմակերպական կառուցվածքը, ստեղծման ու լուծարման պայմանները սահմանվում են հիմնադիր պայմանագրով, որը նկնքում են ընկերակցող հաստատությունները և հաստատում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարությունը: Ընկերակցության կազմում ընդգրկված գիտական հաստատությունները կարող են ստեղծել ուսումնական ամբիոններ և լաբորատորիաներ, որոնք ֆինանսավորվելու են պետբյուջեի կրթության միջոցներից: Համապատասխանաբար ընկերակցությունների մեջ ընդգրկված բուհական ստորաբաժանումներում կարող են ներառվել ընկերակցող գիտական հաստատությունները կամ նրանց ստորաբաժանումները, որոնք ֆինանսավորվելու են պետբյուջեի գիտության միջոցներից:

Սահմանել, որ ընկերակցության համակարգում ուսանելու են բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ ատիճանի ուսանողները, որոնք հայցելու են մագիստրոսի և հետազոտողի որակավորման ատիճաններին:

Խնդրում ենք 7 օրվա ընթացքում կարծիք հայտնել առաջարկությունների վերաբերյալ, այն ստորագրելով գրավոր: Դրան—10, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն հ. 1, պետական նախարար Գ. Արեշյանի աշխատակազմի հասցեով կամ հայտնելով բանավոր պետական բարի գիտության և բարձրագույն կրթության գծով խորհրդական Գ. Նազարյանին (հեռ. 52—13—54): Նախապես շնորհակալություն ենք հայտնում աջակցությունի համար:

Հանձնաժողովի նախագահ
Գ. ԱՐԵՇՅԱՆ
Հանձնաժողովի անդամներ
Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ
Կ. ՇՈՒՔԱԼՅԱՆ
ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆ
Վ. ԳՆՈՒՆԻ
Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
Է. ԱՔԱՅԱՆ